

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄՈՒՄ ¹⁾

Ոչ մի վիճակ, չենք կարծում, աչքան խղճալի լինի և աչքան աչքաժ, խորոված տգէտ բազմաթիւ քահանաների կողմից, որքան Ղա-րաբաղը՝ 16,000 ծուխ ունեցող թեմը, բացի քաղաքներից, որ ասել է 200 գիւղ կամ եկեղեցի, ունի 220 քահանայ։ Խաբաքանչիւր քահանայի վրա ընկնում է մօտաւորապէս 60 տուն, իսկ մօտ քսան գիւղ ունի երկու-երկու քահանայ։ Կան ալս ըոպէիս և տասնաչափ տիրացուներ, որոնց երգւեալ փաստաբանները ամեն օր հոգևոր իշխանաւորների դռները ծեծում են և կեղծ մղկտանքներով հաւատացնել տքնում, թէ՛ մեռելները փոխել են, քահանայ չկալ, տէք մեղ քահանայ։ Բալց... քաղաքումս ամիսը, մինչև իսկ չաբաթը մի քանի անգամ սոճնկի պէս երեւում են գիւղական քահանաներ, որոնք զանազան խաբեբաչական միջոցներով ձեռնադրւել են ալս և աչք գիւղերի վրա, բալց ժողովուրդն ալսօր միանգամաչ չէ ճանաչում նրանց։

Փաստերով խօսենք։

Ո՞վ չէ պատահում ամեն օր ճարտարեցի տէր-Ստ. Վարդապետեանին, որ Մոմնա գիւղի վրա ձեռնադրւել է և ալսօր ժողովուրդը նրան չէ ճանաչում. իսկ ինքն ամեն օր մաշում է առաջնորդի և կոնսիստորիալի դռները և ժողովուրդ խնդրում։

Ո՞վ կարող է ուրանալ, թէ Մեղրեցոց եկեղեցու լուսարար Բարսեղը չէ ձեռնադրւել Խժաբերդ գիւղի վրա և աշխատողներ չկան նրան քաղաքի եկեղեցին բերելու։

Եւ մինչև ալսօր նա անծուխ է։

Ո՞վ չէ տեսել ոմն Մամիկոնեան Նորընծայ քահանային, որ ձեռնադրւել է մի գիւղի վրա, որի անունը չենք Վիշում, իսկ գիւղացիք բանից տեղեկութիւն չունեն և ալսօր խեղճը մնացել է սոված իր բազմամարդ գերդաստանով։

Ո՞վ չտեսաւ երկու շաբաթ սրանից առաջ Մօսէս անունով մի ութսուն տարեկան ծերունու, որ ժառանգում է իր հանգուցեալ քահանայ որդու ծուխը՝ քահանայ ձեռնադրւելով չնորհիւ աչք հանգամանքի, որ ալսօր ամեն մի ականջ լսել է և ամեն մի բերան խօսում է, աչք է՝ որ

¹⁾ «Մշակ» № 46, 1894։ Սկզբից մի քանի տող դուրս թողած։ Խմբ.

Նրա որդին էջմիածնումն է ծառայում, իսկ հայրը, թէկուզ էլ անգրագետ, վախագեղ է քահանայ դառնալ և ապա մեռնել... Աշխարհի սկզբից մինչև այսօր սա տարօրինակ երևույթ չէ համարւում. ո՞վ է տեսել, որ որդու մահից վետու՛յն Նրա գահը ժառանգէ հայրը:

Այս դառամալ նորընծան հինգերորդ քահանան է աչն գիւղի մէջ, որի վրա նա ձեռնադրւեց, իսկ վեցերորդը ձեռնադրւեց Նրանից հինգ օր չետու՛յ, Չէք հաւատում, կամենաք քահանաների անունները մէկ-մէկ վիշնք, — տէր-Խաչատուր, տէր-Պետրոս, տէր Յովհաննէս, տէր-Պօղոս, տէր-Մոսէս և տէր-Վրիդոր. իսկ գիւղը՝ Կուսապատ:

Մենք նմուշի համար առաջ բերեցինք ալստեղ շատերից մի երկու փաստ, որպէս զի մեր ասածը սուտ չհամարեն Նրանք, որոնց չատկութիւնն է միշտ ստել և կեղծել, գուալ և գոչել՝ թէ հաշուեցին մեզ, սրբապղծեցին ժողովրդի ազնիւ զգացմունքները, չարձակեցին հոգևորականութեան դէմ... Ապա ինչ, ծածկել վէրքը, որ փտի մարմնի մորթու տակ և ապականէ ամբողջ կազմը:

Եթէ Ղարաբաղի թեմին ալսօրւանից սկսած ամենաքիչը քսան տարի քահանայ չտան, եղածը Նրան հերիք է և ոչ մի տրտուք չի չարացանի որ և է հասարակութիւն, միայն թէ չզրգուեն Նրան տգէտ տիրացուների բարեկամները և հոգևոր իշխանութեան դուռը չը ղրկեն:

Զուր է միանգամայն շտապել հաւատ ընծայելու հասարակութեան աչն ներկաչացուցիչներին, որոնք առաջին անգամ առաջնորդարանի դռներն են մաշում. պէտք է մտնել, անձամբ մտնել ժողովրդի մէջ և չափել Նրա ցաւը. աչն ժամանակ կը տեսնէք, որ հնար կալ տգիտութեան դէմ մաքառելու. Հարեան գիւղն ունի երկու քահանայ, իսկ քահանայ խնդրող գիւղը հինգ վերստի վրա է կանգնած ալք գիւղից. Քահանայ ունեցող գիւղը քառասուն ծուխ է, իսկ մօտիկ գտնւած 10—15 տուն ունեցող գիւղը քահանայ է խնդրում. Եւ սրանք համարւում են ղժաարութիւններ:

Անարդարութիւն է կաշառքով տգէտ քահանաները բազմացնել ու մեղքը ժողովրդի վրա գցել:

Շուշի:

S.

ՔԱՅԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ՍՈՒԼԴՈՒԶ ԵՒ ՍՈՎՈՒԶՅՈՒԼԱՂ ԳԱԽԱՆԵՐՈՒՄ ¹⁾

Հրաւիրում եմ ուշադրութիւն Պարսկա-բրդաստանի խուլ ան-

¹⁾ «Շաւիղ», 1994 թ., № 16, Յօդածից, որ խորագրած է «Սուլդուղ և Սովուզուղ գաւառները», գէն ենք գցել սկզբի մի քանի տողերը: Խմբ.